

# Պնևմակոկային կոնյուգացված պատվաստում (PCV13)

## Ինչ է անհրաժեշտ Ձեզ իմանալ

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See [www.immunize.org/vis](http://www.immunize.org/vis)

Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: Տե՛ս [www.immunize.org/vis](http://www.immunize.org/vis) կայքը

### 1 Ինչու՞ պատվաստվել:

Պատվաստումը կարող է պաշտպանել և՛ երեխաներն, և՛ մեծահասակներին **պնևմակոկային հիվանդությունից:**

Պնևմակոկային հիվանդությունը հարուցվում է մանրէի կողմից, որը կարող է տարածվել անձից անձ՝ մոտ շփման միջոցով: Այն կարող է առաջացնել ականջի վարակներ, կարող է հանգեցնել նաև ավելի լուրջ վարակների.

- Քոքեր (թոքաբորբ),
- Արյուն (բակտերեմիա), և
- Ուղեղի վերին շերտ և ողնաշար (մենինգիտ):

Պնևմակոկային թոքաբորբը մեծահասակների շրջանում ամենից տարածվածն է: Պնևմակոկային մենինգիտը կարող է առաջացնել խլություն և վնասել ուղեղը և սպանում է 10 երեխայից մեկին, ով դրանով վարակվում է:

Ցանկացած անձ կարող է վարակվել պնևմակոկային հիվանդությամբ, սակայն 2 տարեկանից ցածր երեխաները և 65 և ավելի մեծահասակները, որոշակի բժշկական վիճակներ ունեցող անձինք և սիգարետ ծխողները ավելի մեծ ռիսկի տակ են:

Նախքան մենինգիտի կիրառումը ԱՄՆ-ում ի հայտ են եկել.

- մենինգիտի ավելի քան 700 դեպքեր,
- մոտավորապես 13000 արյան վարակի դեպքեր,
- մոտավորապես 5 միլիոն ականջի վարակի դեպքեր
- մոտավորապես 200 մահ

5 տարեկանից ցածր երեխաների մոտ յուրաքանչյուր տարի: Պատվաստանյութի կիրառումից ի վեր, այս երեխաների մոտ նվազել է սուր պնևմակոկային հիվանդությունը 88%-ով:

Յուրաքանչյուր տարի Միացյալ Նահանգներում պնևմակոկային հիվանդությունից մոտավորապես 18000 մեծահասակներ են մահանում:

Պնևմակոկային վարակների բուժումը պենիցիլինով և այլ դեղամիջոցներով արդյունավետ չէ, ինչպես նախկինում, քանի որ հիվանդության որոշ հարուցիչներ ավելի դիմացկուն են դարձել այս դեղամիջոցների հանդեպ: Այս նկատառումներով՝ պատվաստման միջոցով հիվանդության կանխարգելումը դառնում է էլ ավելի կարևոր:

### 2 PCV13 պատվաստանյութ

Պնևմակոկային կոնյուգացված պատվաստումը (կոչվում է PCV13) պաշտպանում է 13 տեսակի պնևմակոկային բակտերիաներից:

PCV13-ը սովորաբար տրվում է 2, 4, 6 և 12-15 ամսական երեխաներին: Սա նաև խորհուրդ է տրվում 2-ից մինչև 64 տարեկան հատուկ բժշկական վիճակ ունեցող երեխաներին և մեծահասակներին և 65 տարեկան և ավելի մեծահասակներին: Ձեր բժիշկը Ձեզ կարող է մանրամասներ հայտնել:

### 3 Որոշ մարդիկ չպետք է ստանան պատվաստանյութը

Ցանկացած անձ, ով այս պատվաստանյութի դեղաչափի կամ PCV7 կոչվող պնևմակոկային նախկին պատվաստանյութի կամ դիֆթերային տոքոիդ պարունակող ցանկացած պատվաստանյութի նկատմամբ (օրինակ՝ DTaP) երբևէ ունեցել է սուր, կյանքին վտանգ սպառնացող ալերգիկ ռեակցիա, չպետք է ստանա PCV13:

Ցանկացած անձ, ով PCV13 պատվաստանյութի ցանկացած բաղադրիչի նկատմամբ ունի սուր ալերգիկ ռեակցիա, չպետք է ստանա պատվաստանյութ: *Հայտնե՞ք ձեր բժշկին, եթե պատվաստվող անձն ունի որևէ սուր ալերգիկ ռեակցիա:*

Եթե պատվաստման նշանակված անձը լավ չի զգում, ձեր առողջապահական խնամք ապահովողը կարող է որոշել տեղափոխել ներարկումը մեկ այլ օր:

### 4 Պատվաստանյութի ազդեցության ռիսկերը

Ցանկացած դեղորայքից, ներառյալ պատվաստանյութերը, հնարավոր են կողմնակի ազդեցություններ: Սրանք սովորաբար մեղմ են և անցնում են ինքնուրույն, սակայն հնարավոր են նաև լուրջ ազդեցություններ:

PCV13-ին հաջորդած հայտնի խնդիրները տարբերվում են՝ ըստ տարիքային խմբերի և դեղաչափերի: Երեխաների շրջանում ամենից տարածված խնդիրները հետևյալներն են եղել.

- Մոտավորապես կեսի մոտ ներարկումից հետո առաջացել է քնկոտություն, ախորժակի ժամանակավոր կորուստ, կամ կարմրածություն, կամ ցավ՝ ներարկման հատվածում:
- 3-ից մոտավորապես 1-ի մոտ ներարկման հատվածում ի հայտ է եկել այտուցվածություն:
- 3-ից մոտավորապես 1-ի մոտ ի հայտ է եկել թույլ ջերմություն և 20-ից մոտավորապես 1-ի մոտ՝ 39°C (102,2°F)-ից բարձր ջերմություն:
- 10-ից մոտավորապես 8-ը դարձել են անհանգիստ կամ դյուրագրգիռ:

Մեծահասակները հաղորդել են ներարկման հատվածում ցավի, կարմրածության, այտուցվածության ինչպես նաև թույլ ջերմության, հոգնածության, գլխացավի, սարսուղի կամ մկանային ցավի մասին:

Մանկահասակ երեխաները, որոնք PCV13 են ստանում ոչ ակտիվացված հարբուխի պատվաստանյութի հետ զուգահեռ, բարձր ջերմության հետևանքով կարող են ցնցումների աճող վտանգ ունենալ: Ձեր բժշկից խնդրե՞ք լրացուցիչ տեղեկատվություն:



## Խնդիրները, որոնք կարող էին առաջանալ ցանկացած պատվաստումից հետո.

- Մարդիկ երբեմն բուժօգործողությունից հետո, ներառյալ պատվաստումը, ուշաթափվում են: Մոտավորապես 15 րոպե նստած կամ պառկած մնալը կարող է օգնել կանխելու ուշաթափությունը և վայր ընկնելու հետևանքով առաջացած վնասվածքները: Հայտնեք ձեր բժշկին, եթե դուք ունեք թեթև գլխապտույտ կամ տեսողության փոփոխություն կամ զնգոց ականջներում:
- Որոշ մարդիկ ունենում են սուր ցավ ուսի մեջ և ձեռքը շարժելու դժվարություն՝ ներարկման հատվածում: Սա շատ հազվադեպ է պատահում:
- Ցանկացած դեղամիջոց կարող է առաջացնել սուր ալերգիկ ռեակցիա: Լման ռեակցիաները պատվաստանյութից շատ հազվադեպ են՝ միլիոնավոր դեղաչափերից մոտավորապես 1-ի մոտ քիչ և կարող են առաջանալ պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամվա ընթացքում:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի հետ, պատվաստանյութի պատճառած լուրջ վնասվածքի կամ մահվան շատ փոքր հավանականություն կա:

Պատվաստանյութերի անվտանգությունը միշտ վերահսկվում է: Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք՝ [www.cdc.gov/vaccinesafety/](http://www.cdc.gov/vaccinesafety/)

5

## Ի՞նչ տեղի կունենա լուրջ ռեակցիայի առկայության դեպքում:

### Ի՞նչ պետք է ես փնտրեմ:

- Փնտրեք ձեզ վերաբերող ցանկացած բան, ինչպես, օրինակ՝ խիստ ալերգիկ ռեակցիայի նշաններ, շատ բարձր ջերմություն կամ անսովոր վարքագիծ:

Խիստ ալերգիկ ռեակցիայի նշանները կարող են ներառել ցան, դեմքի և կոկորդի այտուցվածություն, ծանր շնչառություն, արագ սրտխփոց, գլխապտույտ և թուլություն՝ սովորաբար՝ պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչև մի քանի ժամվա ընթացքում:

### Ի՞նչ պետք է ես անեմ:

- Եթե դուք կարծում եք, որ դա սուր ալերգիկ ռեակցիա է կամ այլ անհետաձգելի դեպք, որը չի կարող սպասել, զանգահարեք 9-1-1 կամ տեղափոխեք տվյալ անձին մոտակա հիվանդանոց: Այլապես՝ զանգահարեք ձեր բժշկին:

Ռեակցիայի մասին պետք է զեկուցել Vaccine Adverse Event Reporting System-ին (VAERS) (Պատվաստանյութերի անբարենպաստ ազդեցությունների հաշվետվությունների համակարգ): Ձեր բժիշկը կարող է գրանցել այս զեկույցը, կամ դա դուք կարող եք ինքներդ էլ անել VAERS վեբ կայքի միջոցով՝ [www.vaers.hhs.gov](http://www.vaers.hhs.gov), կամ զանգահարելով 1-800-822-7967 հեռախոսահամարով:

VAERS-ը բժշկական խորհրդատվություն չի տալիս:

6

## Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր

National Vaccine Injury Compensation Program-ը (VICP) (Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր) դաշնային ծրագիր է, որը կոչված է փոխհատուցելու որոշակի պատվաստանյութերից տուժած մարդկանց:

Մարդիկ, ովքեր կարծում են, որ վնասվել են պատվաստանյութից, կարող են իրագրելով ծրագրի մասին և բողոք ներկայացնելու մասին՝ զանգահարելով 1-800-338-2382 կամ այցելելով VICP կայք [www.hrsa.gov/vaccinecompensation](http://www.hrsa.gov/vaccinecompensation): Բողոք ներկայացնելու համար ժամանակային սահմանափակում կա:

7

## Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Հարցրեք ձեր առողջապահական խնամք ապահովողին: Նա կարող է ձեզ տալ պատվաստանյութի փաթեթի ներդիրը կամ առաջարկել տեղեկատվության այլ աղբյուրներ:
- Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահական բաժանմունք:
- Կապվեք Centers for Disease Control and Prevention-ի (CDC) (Հիվանդության վերահսկման և կանխարգելման կենտրոնների) հետ.
  - Չանգահարեք 1-800-232-4636 հեռախոսահամարով (1-800-CDC-INFO) կամ
  - Այցելեք CDC-ի կայք հետևյալ հասցեով՝ [www.cdc.gov/vaccines](http://www.cdc.gov/vaccines)

## Vaccine Information Statement PCV13 Vaccine

11/05/2015

Armenian

Office Use Only



Translation provided by the Immunization Action Coalition

42 U.S.C. § 300aa-26